ինչպես և Մարտիրոսի շինող Մխիթար վորդի Դեղկո կամ Գեոմիւրի խաչարձանի կանգնող Մխիթար վորդի Խոյդանայ։ Նույն ավերակում կա մարմարիոնանման սպիտակ քարի վրա հետևյալ արձանագրությունը.

*Ի Թիս Հայոց Զէ / Ես Ներսէս եւ [ա]մ/ուսին իմ . . . . աքան / [կանգն]եցաք այ (աստուծոյ) . . / . . . չու/մըն . . . . (մնացածը չի կարդացվում և կտրած)։*

*Մի գերեզմանաքարի վրա. «Այս է հանկիս/տ Ը.. (մի տառ) այհանշ/իս . յհ. թվ. ՋԼԸ»։*

*Սույն վանքն է ակնարկված անշուշտ Ջաղացի ձորում մի քարի վերա յեղած արձանագրությունը.*

*Ես Խաչատուր միա/կեց շինեցի զՋ/աղացս ի խամո / տվի վանիցս. միաբ/անքս տվին։ Բ։ ժամ զնոր կիրա/կին խափանողն / Ց։ աց նզոված.*

*Այս և Հավելվածի մեջ բերված արձանագրությունները ցույց են տալիս, թե ԺԴ. դարու կիսից սկսած այստեղ հոգևոր կյանք է յեղել և ճոխություն, վորի մնացորդներն են նաև այն խաչքարերը, վոր կան գերեզմանատանը և գյուղի այլ և այլ ծայրերում (տ. Հավել. Ա. 9)։*

*Տարաբաղդաբար Շահապունյաց միջին վտակով ավելի վեր դեպի կժաձոր և Բիչենակ չենք գնացել անձամբ, հավատալով մեր առաջնորդին, թե այնտեղ հնություններ չկան, ուստի և պնդել չենք կարող, թե վորքան ճշմարիտ է այս տեղեկությունը. Ալիշանը յերկու գյուղերի մոտ ավերակների տեղեր և նշանակում։ Նորսից անմիջապես անցել ենք յերրորդ ձորակը՝ Կուքի գետակի հովիտը. Կուքին մեկն է Շահապունյաց ձորի պատմական վայրերից, վոր սեղմված է համանուն լերան գոգում, հրաշալի դիրքով, պտղաբեր, հաստաբուն, հնուց մնացած ծառերով. մինչև այժմ էլ գյուղը պահել է յուր անունը, թեև թուրքաբնակ և սեպհականություն եր Նախիջևանի Քենգերլինսկի բեկերի. սարը կոչվում է նաև Սանգյար։ Գյուղից փոքր ինչ հյուսիս մի տափաստան տեղում գտնվում է բոլորովին ավերակ և անմարդաբնակ Կուքի վանքը, վորի հովասուն և լայնատարած ընկուզենիների տակ մակաղում են ամառը Կուքեցիների հոտերը կեսորին։*

*Վանքի հնագույն, վիմական հիշատակարանը 1287 թվի մի խաչքար է, վոր Պապաք, յենթադրաբար Պռոշի ավագ վորդին, կանգնել է յեկեղեցու արևելյան կողմը. «Ի թվիս Զլգ. Ես Պապ/աք կանկնեցի ի կեն[դանութիւն—եղծուած է] ամուսին ս! իմոյ . . .» մնացածը փչացած։ Նույն թվականին էլ Մեսրոպ Արքեպիսկոպոսը նշանակում և վանքի շինությունը Պապաք իշխանի ձեռքով և Հովհաննես վարդապետի հսկողությամբ *։ Այդպիսի արձանագրություն գտնել չկարողացանք, յեթե չե մնացել այն արևելյան կողմը՝ փլվածքների տակ կամ չե հանել վոր և է մեզ անյայտ հիշատակարանից. բայց այս թվականից էլ հին՝ 1215 թվի խաչքար ունինք Ջրաղացի ձորում *։ Այս խաչքարը ցույց է տալիս, թե այստեղ շինարարությունն սկսվել է դեռևս Վասակ Խաղբակյանի իշխանության որերից։ Պռոշյանց հիշատակություն ունինք գրավոր աղբյուրների մեջ 1322 թվականից, յերբ Մարկոս անունով մի կրոնավոր գրել և տալիս Լամբրոնացու պատարագի մեկնությունը. «ի վանս Կուքոյ ի տան մեծի սրբարանիս և սբ և անեղ հղոր նշանիս Հազարարուրացս (ս!) . . . . յիշխանութեն նահանգիս մերոյ թոռին Պռոշա զոր ի յազգէն Վարդանանց՝ Վասակա . . . .»**. Մի ուրիշ հիշատակարանից տեղեկանում ենք. վոր «Հազարարիւրք» կոչման հետ, կաթուղիկե յեկեղեցիները նվիրված են Ս. Աստվածածնի և Ս. Ստեփանոսի անվան, նաև «միահամուռ Վարդանանց սբ նահատակացս» [1]։ Նույն անունները հաստատվում են մասամբ և արձանագրություններով։*

*Բուն յեկեղեցին փոքր է, չորս, անմիջապես խրած կապած խորաններով (ափսիդ). ունի և գավիթ, թաղակապ, սրահաձև յերեք կամարներով (դալան). գավիթն ավելի ընդարձակ է, քան բուն յեկեղեցին, ինչպես Հավուց թառում Աստվածատուր կաթուղիկոսի շինածը, և հավանորեն նույն շրջանի կամ քիչ ավելի վաղ, բայց վոչ հին, քան 1496 թվը։ Բուն յեկեղեցին ավելի հին է, ինչպես վերև հիշվեցավ, Պապաքի իշխանության որից, դրսից սրբատաշ և ներսից քար ու կրով, բացառությամբ ձախ ավանդատան, վոր ներսից էլ սրբատաշ է։ Նույն ավանդատան պատի վերա կա մի արձանագրություն 1291 թվից։*

*Կամաւն այ ես Վրթ և ամուսին իմ Աղ/ուտ տվաք։ Ճ։ դեկ ի Ռ։ բիւրքս (Հազարբիւրքս) / միաբանքս խոստացան ի տարին։ Բ։ / ժամ, կատարիչ ս! ահնին յայ / թվ. ՉԽ.*

*Վանքը յուր բակով առնված է քառանկյունի պարսպի մեջ՝ արևմտյան և հարաւային մեծ դռներով. հարաւային դրան մոտ, պարսպի մեջ, նորոգության ժամանակ դրուած է մի քար այսպիսի արձանագրությամբ.*

*«Մեք Սարգիս [եւ] Յովէս միաբան[եցաք] ի սբ Աստծնիս եւ ետու ս! . . . . ս եկեղեցոյս. վդս Սա/[ղկաւագ]. զծառզարդարին պատ/ . . գ . . . .»։*

*Արձանագրությանս մեջ հիշված Սարգիսն ու Յովհաննեսը Մարկոս կրոնավորի՝ վերոհիշյալ ձեռագրի գրչի (Սիսակ. 487)՝ ուսուցիչներն են. ժամանակի առաջնորդն եր Սարկավագ վարդապետ, վորի անվան առաջին տառերն են մնացած արձանագրության մեջ։*

---

* Երնջակ. 485։

* «Թվ. ՈԿԴ. Զարդեղ կանգնեցի . . . .»։

** Սիսական. Նմանահանութիւն հիշատակարանի. յեր. 487։

1 Յաւել.Բ. 13. Ձեռ. Էջմ. № 1500/1511, 60 բ։